Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

…

~~12) **ծամախոտ**՝ ծխախոտային արտադրատեսակ, որը նախատեսված է ծամելու կամ ծծելու համար և պատրաստված է ծխախոտի տերևների մամլած կտորներից՝ ոչ ծխախոտային հումքի և այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրա.~~

12) **ծամախոտ՝** նախատեսված է ծամելու համար, որը կարող է պատրաստված լինել բնական ծխախոտային նիկոտինից՝ սննդի մեջ օգտագործվող ոչ ծխախոտային հումքի և այլ բաղադրիչների ավելացմամբ, և կարող է պատրաստված լինել արհեստական (սինթետիկ, ոչ ծխախոտային) նիկոտինից, և այլ բաղադրիչներից ու հավելումներից.

Հոդված 3. Ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների ներմուծմանը, արտադրությանը, իրացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել, իրացվել և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման նպատակով արտադրվել Կառավարության սահմանած անվտանգության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները:

2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտահանելու նպատակով արտադրվող ծխախոտային արտադրատեսակները և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչները կարող են արտադրվել արտահանվող երկրի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետությունում իրացվող ծխախոտային արտադրատեսակները ենթակա են համապատասխանության գնահատման:

4. Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, ներմուծումը, իրացումը, եթե ծխախոտային արտադրատեսակների ծխում նիկոտինի և խեժի պարունակությունը գերազանցում է Կառավարության հաստատած թույլատրելի սահմանը: Սույն պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վրա:

5. Անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձինք կարող են Հայաստանի Հանրապետություն ներմուծել միայն Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները չգերազանցող ծխախոտային արտադրատեսակներ:

~~6. Արգելվում է ծամախոտի մեծածախ և մանրածախ վաճառքը Հայաստանի Հանրապետությունում.~~

6. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է արհեստական նիկոտինից պատրաստված ծամախոտի մանրածախ և մեծածախ վաճառքը: